

**ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԶԵԿՈՅՑՑԸ**  
**Միարանական ժողովին, 4 նոյ. 1997**

Սիրելի Միարանակից նդրայրմեր,

Գոհութիւն Աստուծոյ, որ պատեհեռութիւնը ստեղծեց որպէս զի Սուրբ Արքույս Միարանական այս ժողովին կարենային մասնակցին Միարանութեամս աշխարեացրի անդամները եւս, որոնց փորձառութեամը, եւ խորհուրդներուն նպաստը կը յաւսանք ունենալ, վերանայելու եւ կարգաւորելու համար բազմերես պարտականութեամց եւ պատախանանտուութեամց շարքը, որոնց լուծը սիրով կը կրեմ միայն երկոտասմեակ մը վանական միարանմեր, ծառայութեան ոգիով, եւ ըստ իւրաքանչիւրին ի վերուստ տրուած շնորհմերով:

1990 թումիսին եւ օգոստոսին, երկու տեղեկատուութեամբ մեր միարանակից եղայրմերուն ներկայացուցինք Պատրիարքարանիս իրաց կացութիւնը, յիշելով Տօօրէն ժողովին մէջ առաջադրուած ծրագիրները եւ միջոցառումները, համակարգութիւն ստեղծելու համար Պատրիարքարանի բազմարիւ բաժանմունքներուն միշեւ:

Բացայայտ էր որ բազմանիւղ եւ բազմերես պարտաւորութեամց ենթակայ եւ յանձնառու հաստատութիւն մըն է Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը: Եւ աներաժեշտ կարիքը ունի գիտակից եւ նուիրեալ սպասարկումներու, մեր ազգին ու Սուրբ Նկեղեցին ժառանգութեամց հաւատարիմ աւանդապահները ներկայանալու համար:

Տօօրէն ժողովի տեղեկատուութեան մէջ, կարելի է նշմարել ընդեանուր ուրաւագիծը անցնող Քամի մը տարիներու ընթացքին Միարանութեանս գործումներան, ծառայութեան, եւ դիմագրաւելիք հարցերուն:

Դարաւոր եւ Սրբազն այս մայրավանքին գոյութեան եւ առաքելութեան շառաւիդները կարելի է ամփոփել եետեւալ գլուխակարգութեամց ներքեւ, առանց նախապատութեան հարց յարուցանելու:

#### Ա.- ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը մեր եռգեւոր դպրանոցն են, որոնց առաքելութիւնն է կրթել պատամի օւսամմողները ուղղափառ հաւատիքովը եւ սրբազն աւամմութիւններովը Հայաստանեայց Նկեղեցիին, իմացական ընդեանուր կրթութեամբ եւս պատրաստելով զանոնք, ընդունելու բրիստոսի լուծը եւ եռգեւոր ծառայութեան հաւատարիմ կենցաղը, մասնաւորապէս իրեր անդամ՝ սրբաւելեաց սպասարկող եւ պահապան Սրբոց Յակոբեանց Միարանութեան:

Մեր այս կրթարանի վերջին տասնամեակներու եռւմճը, կը բացայայտէ Քրիստոսի խօսքը, թէ՝ «Բազումք են կոչեցեալք, եւ սակաւէ են ընտրեալք»:

Պէտք է ընդունինք սակայն, որ կարիքը կայ նաև պայմաններու բարելաւման: Աներաժեշտ է ունենալ նման կրթարան մը վարելու համար փորձառու եւ դեկապար անձերը: Ներկայ բնակավայրը ձեռնտու չէ եռգեւոր նեմարանի մը մթնոլորտը ապահովելու, ուստի բելադրութիւնը կայ նախկին նեմարանը վերակառուցելու:

Քաղաքական կացութեանց եւ ըմկերային այլ պայմաններէն մղեալ, աշակերտներու եւ հայագիտութեանց ուսուցիչներու ընտրութիւնը պարտաւորաւցանք Հայաստանէն կատարել, 1992էն սկսեալ: Այս իրողութիւնը եւս իր հետ բերաւ ապրելակերպի եւ հետաքրքրութեանց իրայատուկ հետեւանքներ:

Վերոյիշեալ պայմաններու բարելաւումը հետապնդելով համերձ, ամէն տարի Առաջին դասարանի համար 15 ուսանողներ ապահովելու աշխատանք կը տարուի: Բնականօրէն բարձրագոյն դասարաններու աշակերտներու թիւը կը պակսի: Այդուհանդերձ ընդհանուր թիւը կը պահուի 45-60ի միջեւ: Եւ այս՝ իր օգտակարութիւնը ունի Սուրբ Տեղեաց եւ ամենօրեայ պաշտամունքներու կատարման տեսակետն:

Թեմական առաջնորդներու փափաքին ընդառաջելով, երկոտասնեակ մը մասնաւոր ուսանողներ եւս ընդունած ենք Ամերիկայէն, Պուլկարիայէն, Ռումանիայէն, Եգիպտոսէն:

Քահանայական ճենադրութիւն կատարած ենք եկմգ միարան արեղաններու եւ չորս ամուսնացեալ Քահանաներու, որոնցմէ մէկը՝ Տ. Զաքարիա Քենյ. Սարիրէկեան ենթակայ է վանական իշխանութեան, եւ ներկայիս կը ծառայէ իրեւ օգնական հռիւ Յորդանանի Պատրիարքական Փոխանորդ Վահան Եպս. Թօփալեանի:

S. Գալուստ Քենյ. Դարրիննեան վերադարձաւ Գաեիրէ, բատ Եգիպտոսի Առաջնորդ Տ. Զաւէն Արք. Զինչիննեանի կարգադրութեան, եւ Տ. Եզրաս Քենյ. Պոկտան Ռումանիոյ Առաջնորդ Տ. Տիրայր Արք. Մարտիկեանի կարգադրութեամբ կը ծառայէ Պուլքէշի մէջ: Խսկ Պուլկարիայէն Տ. Դանիէլ Քենյ. Գարանեան տակաւին ուսման կը հետեւի:

Գոհունակութեամբ պէտք է յիշենք որ անցեալ երկու տարիներուն, տասնմեկ հօգեւորականներ (Մէկ վարդապետ, եկմգ Արեղայ, երկու Քահանա եւ երեք սարկաւագ) Անգլերէն եւ Երրայերէն լեզուներ սորվելու, եւ համալսարան մուտքի բննութեանց պատրաստուելու դիտումով, զանազան դասընթացքներու կը հետեւին, գոհացուցիչ արդիւնքներով:

Կրթական երկրորդ օմախը Սրբոց Մարգմանչաց Երկրորդական Վարժարանն է, որում աշակերտութեան թիւը 150ի իջած է, Քաղաքական վերիվայրումներու եւ մեր ժողովուրդին մեծամասնութեան արտագաղթելուն հետեւանքով: Սակայն ազգային եւ կրօնական կրթութեան ոգին նոյնն է, սերունդէ սերունդ, ներկայ շէմքին կառուցման 1929 թուականէն ի վեր:

Նոյն թիւով եւ ոգիով աշակերտութիւն ունինք Ամերի Խւզպաշեան Կիւլպէնկեան Նախակրթարանի մէջ: Խսկ աւելի համեստ պայմաններու ներքեւ, Հայֆայի եւ Նաֆայի հայութիւնը, իրաքանչիւրը նօսրացած եւ վերածուած մօտ 300-ական հայ հաշուող համայնքներու, 50-ական մանուկներ ունին, որոնց շարարը մէկ օր հայկական կրթութիւն կը ջամրուի:

## Բ. ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԱՌԱՋԵՍԼԻԹԻՒՆ

Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը ունի մշակութային առաքելութիւն մը:

Ոչ միայն պահպանելու ինչ որ աւանդ քողուած է մեզի իրրեւ հոգեւոր ժառանգութիւն, եւ սերունդէ սերունդ փոխանցուած է իրրեւ հայ ստեղծագործ մտքի եւ հոգիի արգասիք եղող արուեստ եւ մշակոյք, այլ նաև զանոնք տարածելու, բանալու ժողովուրդներու, արուեստակր ընկերութեան, վայելքին, զնահատանքին եւ հիացմունքին:

Այս առաքելութեան օգիէն մղուած կը գործեն եւ պէտք է գործեն Պատրիարքութեանս զանազան բաժանմունքները:

### **1.- Ս. Քորոսի մատուիտին մէջ ամփոփուած Զեռագրատունը:**

Մօտ 4000 ձեռագիրներու պահպան երեշտակը եւ հոգատարն էր Նորայր Արք. Պողարեանը, մինչեւ որ Ֆիզիքապէս անկարող եղաւ շարունակելու, եւ այդ պաշտօնը ստանձնեց Լուսարարապէտ Դաւիթ Արք. Սահակեան:

Կարիքը զգալի է արդիական եւ ապահովութեամբ երաշխաւորուած շենքի մը մէջ ամփոփելու այդ գանձերը:

### **2.- Հելէն եւ Սդուարդ Մարտիկեան Թանգարանը:**

Ժառանգաւորաց Վարժարանի նախկին շենքին մէջ ամփոփուած, համեստ եւ կոկիկ դասաւորուած, բանգարան մըն է, այցելուներուն որոշ գաղափար մը տուող հայ արուեստի եւ հայ ժողովուրդի պատմութեան մասին: Աւելի արդիւմաւոր առաքելութեան համար կարիքը կայ բանգարանի յատուկ ծրագրով շենքի մը մէջ փոխադրուելու:

**3.- Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանը.**- Մօտ 100,000 բազմակու հատորներով հարուստ մատենադարանը օգտակար ծառայութիւն մը կը մատուցանէ քէ հետաքրքիր այցելուներուն եւ քէ ընթերցասէր հասարակութեան:

1929ին կառուցուած շենքը կարիքը ունի արդիական եւ ապահովութեան սարքաւորումներով օժոտուելու:

### **4.- Տպարանը**

Մշակութային առաքելութեան իրագործման միջոցներէն մէկը երատարակչութիւնն է:

Սրբոց Յակոբեանց Տպարանը, 1833 թուականէն ի վեր հաստատուած է: Երախտագիտութեան զգացումներով միայն կարելի է անդրադառնալ այն բոլոր երատարակութիւններուն, ծաւալով մեծ կամ փոքր, որպէս մեր երախտաւոր հայրերուն զնեօղութիւններով, ի լոյս ընծայուած են:

Համաստեղութիւն մը մշակոյքի բազմազան մարզերէն ընտրուած. մեկնողական, գիտական, պատմագրական, մատենագրական, դաստիարակչական, բանասիրական, լեզուարանական, բարգմանական, բերրողական, հնագիտական, դասագիրքերու, Նարակնոցի, Ճաշոց հատորներու, ժամագիրքի, Սուրբ Տեղեաց յատուկ արարողութեանց, անհատական ստեղծագործութեանց, հայ եւ օտար լեզուներով, եւ բազմահազար հատորներով:

Ներկայիս, ուրը եւ տասնըվեց էջանի պրակներ տպող մեթենայ չունինք, որուն հետեւանքով բոլոր հատորները, նաև «Սիոն» պաշտօնաբերքը, օտար տպագրիչներու կը տրուին: Ամրողական սարքաւորումի մը կարիքը ունինք:

### **5.- Հրապարակային Հաւաքոյքներ**

Մշակութային առաքելութեան մաս կը կազմեն երապարակային այն հաւաքոյքները, որոնց կը երաւիրուին հայ եւ օտար հասարակութիւնը, ներկայ գոնուելու դասախոսութեանց, բատերական, երաժշտական յայտագիրներու, ազգային եւ կրօնական տօնակատարութեանց յիշատակութեան, եւ որոնք կը կազմակերպուին Սրբուադէմի գործունեայ կազմակերպութեանց (Հայ

Նրիտասարդաց Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հայ Բարեսիրաց Միութեան) անդամներէն կազմուած Պատրիարքարամի Մշակութային յանձնախումբի, ժառանգաւորաց եւ Թարգմանչաց վարժարաններու նախաճնութեամբ, եւ կամ ըստ առիթի նշանակուած կարգադիր յանձնախումբի կողմէ:

#### Գ.՝ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԵԼՈՒԹԻՒՆ

Սրբաց Յակոբեանց Միարանութիւնը վանական Միարանութիւն է, հակառակ որ մեկուսացեալ վանքի մը բնակիչներ չեն, եւ բազում ընտանիքներ տասնամեակներէ ի վեր կը բնակիմ վանքէն ներս տրամադրելի սենեակներու եւ բնակարաններու մէջ: Վանականները ունին իրենց յատուկ հասարակաց սեղանատուն, եւ իրաքանչիրին վստահուած աշխատանքային պարտականութիւններ:

Ամէնօրեայ պաշտամունքները կարելի կանոնաւորութեամբ կը կատարուին մայրավանքին մէջ, Աաեւ Սուրբ Տեղեաց Մէջ, ուր սպասարկող միարաններու պակասը զգալի է եւ մտահոգիչ, մանաւանդ որ միշագգային խումբերով ուխտաւորներու, այցելուններու շարքին, միշտ կը գտնուին հաւատաւոր, գիտակից եւ հմուտ անձեր, որոնց հայ աւանդութիւնը պէտք է ներկայացնի վայելչօրէն եւ կիրք ներկայութեամբ: Միարաններուն բնակարանի պակասը յաւելեալ մտահոգութիւն է:

Միարանութեանս կրօնական առաքելութեան ծիրին մէջ կ'իյնայ, արտասահմանի եկեղեցական թեմերու խնդրանքին ընդառաջելով, հոգեւորականներ դրկել եռվուական ծառայութեան: Այսօր, մեր Միարանութեան կը սը, ԶՕ հոգի, այդ ծառայութեան մէջն են, Եւրոպա, Միացեալ նահանգներ, Արժանքին, Պրագիլ, Աւստրալիա:

1937ին՝ չորս էր անոնց թիւր, եւ 1957ին՝ տասնըերկու:

Միարանական այս ժողովի առիթով անոնց ներկայութիւնը ուրախութիւն է մեզի համար որովհետեւ, անբաւարար է թիւր վանական իշխանութեան սահմաններուն մէջ գործող անդամներուն: Եւ մտահոգ ենք մեր տունին կարիքներուն բարտք մատակարարման հարցերով: Նախ մեր տունը պէտք է կարգի մտնէ:

Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կոստանդնուպոլսոյ նուիրապետական Արքուներու հետ Սուրբ Աքոռոյս յարաբերութիւնները կը շարունակուին սիրալիր հաղորդակցութիւններով եւ ըստ առիթի:

Խսկ Մայր Աքոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետին հետ հաղորդակցութիւնը աւելի յանախակի է, մանաւանդ Գերագոյն Հոգեւոր Խորենուրդի Ժողովներու կապակցութեամբ, եւ 1700ամեակի տօնակատարութեանց ծրագրումներուն պատճառով, յանձնախումբերու մէջ, Երուսաղէմի ներկայացնուցիչ ունենալով Խուսարարապետ Տաւիթ Արք. Սահակեանը եւ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանը:

## Դ. - ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միարանութեանս եւ Սուրբ Տեղեաց եւ մեր ժողովուրդին հետ կապուած հարցերով յարաբերութեանց մէջ եղած ենք Հայաստանի, Յորդանանի, Խորայէլի եւ Պաղեստինի իշխանութեանց եւ կառավարական ներկայացուցիչներու հետ:

Համատեղ խորերդակցութիւններ ունեցած ենք Երուսաղէմի կրօնական համայնքներու պետերուն, Յոյն եւ Լատին Պատրիարքութեանց հետ, ըստ պահանջից երկրին մէջ ստեղծուած կացութեանց, եւ ծրագրելու համար Քրիստոնեութեան 2000 ամեակի հանդիսութիւնները:

## Ե. - ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

1990 Յունիսին, Միարանակից մեր եղայրներուն ուղղուած մեր առաջին տեղեկատուութեան մէջ, հետեւեալ կացութիւնը պարզած ենք.-

«Երեք ամիսներէ ի վեր կը շանանք հաւաքել եւ ցանկագրել ամբողջ վանքապատկան կալուածները իրենց հասցեով, վարձակալներով, ներկայ տարեկարձով եւ պայմանագրերով։ Դժրախտարար չենք կարողացած զանոնք ամրողացնել։ Կալուածներու հոգատարութիւնը յանձնուած էր նշանակուած երեք տարրեր պատասխանատուններու, որոնք գործած են իրարմէ անկախ եւ անտեղեակ, առանց կեդրոնացեալ համարատուութեան։

« Կալուածներու ստորագրուած պայմանագիրերն եւս պահուած են տարրեր տեղեր եւ տարրեր անձներու մօտ։

«Ներկայիս նշանակած ենք երկու երիտասարդներ, որոնց յանձնուած ենք պարտականութիւնը ցանկագրելու ամբողջ տեղեկութիւնները կալուածներու մասին.... Անք պահանջնելու համար նշգրիտ պատկերը ներկայ կացութեան։

«Տեղական քերքերու մէջ երրեմն ակնարկութիւններ կը կարդանք քէ Հայոց Պատրիարքարանը իր կալուածներէն ոմանք ծախելու մտադիր է։ Հետաքրքրուողներուն եւ քղթակիցներուն մեր հաստատակամ պատասխանը եղած է, որ նրուսադէմի Հայոց Պատրիարքարանը ոչ մէկ դիտում ունի իր կալուածներէն որեւէ մէկը ծախելու։

«Վտանգներ կան սակայն անխնամ քողուած մեր եղայրը կորսնցնելու։ Խափանելու համար նման հաւանականութիւն մը, պարտինք քաջակերել տեղացի եւ այլ երկիրներէն շինարարներ որպէս զի իրենց դրամագլուխը շահարկեն մեր կալուածներուն վրայ...»

Նոյն ժամանակ, Նիւ Խօրէն շրջանէն նշանակեցինք Կալուածոց Խորհրդատու Յանձնախումը մը, երեք ազգայիններէն, Մայքլ Էրֆիլեքեան, Գեորգ Յովնանեան եւ Վարդգէս Պալեան, ատենապետութեամբ Յուսիկ Շ. Վրդ. Պաղտասեանի, որ հովհան էր Լիվինկսրըն Նիւ Ճըրզիի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ:

1992ին, Տնօրէն Ժողովի որոշումով, Յուսիկ Շ. Վրդ. Պաղտասեան, Միացեալ Նահանգաց Արեւելեան քեմի մէջ իր հովուական ծառայութենէն հրաւիրուեցաւ ստանձնելու կալուածոց և եսչութեան պաշտօմը:

Նպիսկոպոսական օծում ստանձնէն յետոյ, Յուսիկ Սրբազն, Մայքլ Էրֆիլեքեանի օծանդակութեամբ, նոր Երուսաղէմ Քաղաքի մէջ հաստատեց կալուածոց գրասենեակը, Քարտուղարով, եւ համակարգիչի դրութեամբ, Պատրիարքարանէն փոխադրելով կալուածոց քոյքածրաբները:

Եւ ծրագիրներ մշակուեցան արդինաւորելու համար եկամտաբեր կալուածները:

Ասոնց կարգին էին 99 տարուան համար վարձու տրուելիք երեք կալուածներ. Ռամէէի մէջ (1993 ին) Երուսաղէմի մէջ (1994ին) եւ Եաֆայի մէջ (1995ին), որոնց համաձայնագրին պայմանները փաստարաններուն եւ կալուածոց Տեսչի յանձնարարութեամբ ներկայացուեցան Տնօրէն Ժողովին, ընդունուեցան, եւ որոշուեցաւ վաւերացնել Պատրիարք Սրբազնի ստորագրութեամբ:

Ռամէէի առաջին համաձայնագրին ստորագրութենէն (1993 Յունուար 24էն) երեք տարիներ կ'անցնին առանց ծրագրի եետապնդման կամ իրագործման մասին տեղեկատուութեան եւ անդրադառնի:

Կարգ մը տարաձայնութիւններ կը երապարակուին, որոնց եետեւանքով Պատրիարքին կը վերագրուի հողեր ծախելու եւ համաձայնագրեր ստորագրելու մեղադրանքը:

Թոյլ տուէք այստեղ ներկայացնել իրողութիւնները այնպէս ինչպէս արձանագրուած ունինք եւ մանրամասնութիւններ որոնք ներկայացնեցած ենք Տնօրէն Ժողովին եւ կալուածոց Տեսուչին ուշադրութեան, 99 տարուան վարձու տրուած երեք կալուածներու վերանայման եւ Կալուածոց Մատակարարման Մարմինի նշանակման կապակցութեամբ:

## 99 Տարի Վարձու Տրուած Երեք Կալուածներու Վերանկատում

### Ա. ՌԱՄԵԿԻ ՀՈՂԸ

-1990 Մարտ 22ին Պատրիարքի ընտրութենէն յետոյ, Տնօրէն Ժողովի մէջ Ակատի առնուած կարեւոր հարցերէն մէկը Վանքապատկան կալուածներու եւ հողերու հարցն էր:

Յուսիկ Շ. Վրդ. Պաղտասեամի Ատենապե տուրեամբ, Հովի Լիվինկարքնի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ, Նիւ Ճըրզի, կալուածոց Խորերդատու Մարմինին անդամ Ձշանակութեցան կալուածական եւ շինարարական հարցերու հմուտ երեք ազգայիններ, Միացեալ Նահանգներէն (Մայրըն Երքիլերեան եւ Վարդգէս Պալեան Ռւաշինկընէն, եւ Գէորգ Ցովնանեան Նիւ Ճըրզին):

Գնահատելի էր Մայրըն Երքիլերեանի անմիջական օժանդակութիւնը: 1990 Նոյեմբեր 30 բուակիր նամակով ան կը յայտնէր իր պատրաստակամուրիւնը կազմակերպելու համար Պատրիարքարանի կալուածոց գրասենեակը:

1990 Հոկտեմբեր 10 բուակիր մեր նամակով Յուսիկ Հայր Սուրբին դրկեցինք ցանկ մը Երուսաղէմի, Եսաֆֆայի եւ Ռամէի մեր կալուածներուն, նաև Քարտէսներ, Խորերդատու Մարմինին եւս ծրագրելու եւ Տնօրէն Ժողովին առաջարկներ ներկայացնելու համար:

— Պր. Երքիլերեանի 4 Նոյեմբեր 1991 բուակիր եւ տասը էջնոց տեղեկագիրը Ռամէի 190 Տունում Վանքապատկան հողին օգտագործման մասին է միայն:

Ըստ այդ տեղեկագրին, Պր. Երքիլերեան եւ խորերդատու Յանձնախումբի Ատենապետ Հայր Յուսիկ, Երուսաղէմ այցելած են եւ տեսակցութիւններ ունեցած են հետեւեալ անձերու հետ—

1.- Փաստարան Արքահամ Սօխօվօլսէիի հետ, ո բուն ծանօթ է Հայր Յուսիկ 1960 բուականէն, երբ ինք Խորայէի մէջ կալուածոց տեսուչ էր: Եւ Պր. Երքիլերեան կը յանձնարարէ Սօխօվօլսէին ընդունիլ որպէս մեր փաստարանը այս գործառնութեանց մէջ:

2.- Ռամէի Քաղաքապետարանի նարտարապետ Ռամի Ճիլի հետ, ներկայացնելու համար ընդունելի շինարարական ծրագիրներ:

3.- Մարիօ Լէզնիք եւ Մօրտրբայ Ավիկ անուն երկու երեայ շինարարներու հետ, ստուգելու համար անոնց ներկայացնելիք առաջարկները:

Այս բոլորին հետ տեսակցութիւններ կարգադրողը եւ Պ. էրքիլերեանին եւ Հայր Յուսիկի հետ միասին խորհրդակցութեանց մասնակցողն է փաստարան Արքահամ Սօխովոլսին:

Հայր Յուսիկ կ'առաջարկէ Սօխովոլսին որ մեր դրացի եռդերուն վրայ կառուցող երկու ուրիշ շինարարներուն եւս մօտենայ, որ իրենց առաջարկները ներկայացնեն:

Կը բելադրուի համաձայնագիր մը ստորագրել 99 տարի վարձու տալու եւ երկու տարիէն ծրագիրը ամրողացնելու: Կէս Միլիոն տոլար Պատրիարքարանը կանխիկ պիտի ստանայ, եւ շինուելիք ընդհանուր բնակարաններուն 20% (Քսան առ հարիւրը) Պատրիարքարանին պիտի յանձնենուի: Ծինարարը պիտի ստանձնէ պետական եւ այլ տուրքերու հետ կապուած բռլոր ծախօները, որով Պատրիարքարանը ճեննարկի աւարտին պիտի ուժենար 20 միլիոն տոլարի մուտք մը: Եւ 99 տարի յետոյ ամրոց կալուածը եւ շէնքերը ամրողութեամբ Պատրիարքարանին սեփականութիւնը պիտի դառնան:

Պ. էրքիլերեան առանձին էջերով կը ներկայացնէ մանրամասնեալ հաշիւմները իւրաքանչիւր առաջարկին, Մօրտըքայ Ավիվին (1440 բնակարան շինելու հաշիւով), Մարիօ Լէզնիքին (800 բնակարան շինելու հաշիւով), եւ Արքահամ Սօխովոլսին (1083 բնակարան հաւանական նկատելու հաշիւով):

— Իսկ 4 դեկտեմբեր 1991 բուակիր իր նամակով, Սօխովոլսկիին ուղղուած, Պ. էրքիլերեան կը յայտնէ հետեւեալը.

1.- Պատրիարքութեան Տնօրէն ժողովը եւ Միացեալ Նահանգաց մէջ կալուածոց խորհրդատու յանձնախումբը կը հաստատեն առնուելիք այն ժայլերը, որոնք յիշուած են քեզի ուղղուած 8 նոյեմբեր 1991 բուակիր իմ նամակին մէջ:

2.- Պատրիարքարանը կ'ակնկալէ նուազագոյն 20 Միլիոն Ամերիկեան Տոլար ապահովել համաձայնագրին ստորագրուելին յետոյ, նրկու տարուան միջոցին:

3.- Ատենապետ Հայր Յուսիկ նշանակուած է ըլլալու հողորդակցութեանց կապը Սօխովոլսկիի եւ Յանձնախումբերու միջեւ:

4.- Սօխովոլսին պիտի տեսակցի Մօր տըքայ Ավիվին հետ, հետեւեալ պայմաններով.-

Ա. Ավիվին նախատեսած նուազագոյն 1440 եւ աւելի բնակարաններու հաշիւով:

Բ. Կէս Միլիոն Ամերիկեան տոլարի կանխիկ վճարումով Պատրիարքարանին:

Գ. Ավիվ պիտի վճարէ եկեղեցիկն պահանջուելիք բռլոր տեսակի պետական տուրքերը եւ տուրքերուն տոկոսները:

Դ. Բնակարաններու քիւին 20%ը եկեղեցիկն պիտի արուի, զերծ որեւէ պարտաւորութենէ, եւ առնուազն 300 բնակարան:

Ե. Ավիվը պիտի վճարէ Սօխովոլսին փաստարանական ծախօները:

Զ. Համաձայնագրին մէջ պէտք է նշուի որ Պատրիարքարանը պէտք է վաւերացնէ ծրագիրները, շինարարական գծագրութիւնները, եւ այլն:

--- Այս ժամանակամիջոցին, նկատի առնելով Պր. Երքիլեքեանի խոստումը՝ ամսական երկու հազար տոլար տրամադրելու Պատրիարքարանին, որպէսզի կալուածոց գրասենեակը կազմակերպուի եւ Հայր Յուսիկ երաւիրուի որպէս ամենէն յարմար անձը գրասենեակին պատասխանառու, Տեօրէն Ժողովը 1991 Դեկտեմբեր 2-ի նիստին մէջ որոշեց Յուսիկ Ս. Վրդ. Պաղտասեանը երաւիրել իրբեւ կալուածոց Տեսուչ:

--- Տեօրէն Ժողովի 1992 Փետրուար 16 նիստին մէջ, Հայր Յուսիկ «Մանրամասն տեղեկութիւններ տուաւ մեր կալուածներու մասին»:

--- 1992 Հոկտեմբեր 21 բուակիր տեղեկագրով Պր. Երքիլեքեան Պատրիարք Սրբազնին կը տեղեկագրէ, որ նիւ Նորդի մէջ գումարուած ժողովին, 19 Հոկտեմբերին, մասնակցութեամբ Ատենապես Յուսիկ Սպիտակովովուի եւ Պատրիարքարանի փաստարան Արքահամ Սօխովոլսկիի, նկատի առած են Ռամլէի կալուածի հարցը:

Կ'որոշեն Մօրտըքայ Ավիվին հետ համաձայնի հետեւալ պայմաններով.-

Ա.- \$500,000 Կանխիկ գումար Պատրիարքարանին:

Բ.- Նուազագոյն 1000 (Մէկ Հազար) բնակարան կառուցանել, փոխանակ 1440ի:

Գ.- 15%ը Պատրիարքարանին, - փոխանակ 20%ին, եւ 150 բնակարաններ, փոխանակ 300 բնակարանի:

Դ.- Ավիվ պիտի վճարէ բոլոր տուրքերը եւ ծախօները:

Ե.- Այսպիսով, Պատրիարքարանը ստացած պիտի ըլլայ S19 Միլիոն տոլար:

- Արքահամ Սօխովոլսկի եւ Յուսիկ Սպիտակովով պիտի հետապնդեն Ավիվի հետ բանակցութիւնները եւ պիտի տեղեկագրեն:

\*

\*\*

Եւ արդարեւ Տեօրէն Ժողովի 1993 Յունուար 21 նիստի առենագրութեան մէջ կը կարդանի. «Կալուածոց Տեսուչի տեղեկատութիւնը Ռամլէի հողին վրայ շինարարական ծրագրի մասին: Յուսիկ Սրբազն, կալուածոց տեսուչ, մանրամասն տեղեկագրի մը ներկայացուց Ռամլէի վանքապատկան հողամասին վրայ նոր կառուցուելիք շնթերու մասին....: Հողամասը իննիսունը իննը (99) տարուայ համար վարձու պիտի առուի երեայ Քօնքրաքըրը մը, որմէ շինուելիք բնակարաններուն հարիւրին տասնընգը (15%) մեր իրաւունքն է: Նուազագոյն 750 յարկարաժին պիտի շինուի: Իննիսունը իննը տարի վերջ մերն է կալուածը: Մեր բաժինը տասնընը միլիոն կ'ելէ: Այս ծրագիրը վանքին համար նպաստաւոր է: Պատրիարք Սրբազնը պիտի ստորագրէ, վաւերացնէ Քօնքրաքըրին հետ, Արմինը Փարքիարքէյր Փրօնէքը Ուան

ամուսն տակ....: Տնօրէն Ժողովը համաձայն գտնուեցաւ ներկայացուած բնդիանուր ծրագրին: Եւ համաձայնագիրը կը ստորագրուի 24 Յունուար 1993ին:

— Իսկ Տնօրէն Ժողովի 1993 Մարտ 3 նիստի Ատենագրութեան մէջ կը հաստատէ քէ՝ «Ռամէկի մեր հողի պայմանագրութեան մէջ, տասնընթանգ տահարիւրը (15%) որ մեզի բաժին կ'իյնայ, ոչ քէ տուներուն բիւկին հաշիւն է, այլ տարածութեան հաշիւն է: Պատրիարք Արքազան Հայրը ստորագրած Ռամէկի մեր հողի պայմանագրութիւնը...»:

**Բ. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԱԼՈՒԱԾ 9 ՇԼՈՄՉԻՈՆ  
ՀԱՄԱԼՔԱ ՓՈՂՈՑԻՆ ՎՐԱՅ**

Տնօրէն Ժողովի 1994 Յունիս 12 նիստի Ատենագրութեան մէջ կը կարդանք. «կալուածոց Տեսուչ Յուսիկ Եպս. Պաղտասեան ներկայացուց Մրագիր Երկրորդը՝ Նոր Երուսաղէմի մէջ: Կալուած Թիւ 35 եւ հողամասեր քիւ 80,81,82,137: Իննիսունը իննը (99) տարուան համար որոշ պայմաններով վարձու պիտի տրուի: Վանքին բաժինը 30% (Երեսուն առ Հարիւր) է ամրող քրոյց-էն: Քօնքքաքրըրն ալ բռնուած է: Ժողովը համաձայն եղաւ այս ծրագրին: Արքահամ Սօխօվօլսկի փաստարանին կողմէ պատրաստուած համաձայնագիրը ստորագրուեցաւ 28 Յունիս 1994ին, Տի-ԱՅ-ԷՍ ընկերութեան վարիչ Դաւիթ Սատանին հետ:

Այս գործառնութեան պարագային ոչ մէկ կանխիկ վճարում չէ մախատեսուած Պարիարքարանիս: Եւ Համաձայնագրին գործադրութեան հսկող փաստարան նշանակուած է Արքահամ Սօխօվօլսկիի գործընկերներէն Խօհաննան Ալք-պառուրը, Երուսաղէմի գրասննեակին պատասխանտուն, որ նոյն ժամանակ կը ներկայանայ որպէս ներկայացուցիչ փաստարանը Տի-ԱՅ-ԷՍ վարձակալ ընկերութեան:

**Գ. ԵԱՖԱՅԻ Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
ԵՐԶԱԿԱՅՑԻ ԿԱԼՈՒԱԾԸ**

Տնօրէն Ժողովի 1995 Փետրուար 16 նիստին մէջ արձանագրուած է. «Յուսիկ Եպիսկոպոս Կալուածոց տեսուչ, մանրամասնօրէն ներկայացուց նաֆայի վաճէքապատկան Ս. Նիկողայոս վանքի շրջակայ հողին ընդրհանուր քարտէսը: Նորոգութեան արտօնագիրը ստանալէ վերջ, առնել մէկ Միլիոն տոլար գումարը: Իննիսուն իննը տարուան վարձու պիտի տրուի Կէլուու Պիլտինկ Քմրընին: Իննիսուն իննը տարիներ վերջ, ապահովել Վաճէքապատկան ըլլալու պայմանը կամ նկարագիրը: Որոշուեցաւ համաձայնագիրը ընդունիլ եւ ստորագրել:»

Համաձայնագիրը ստորագրուեցաւ 20 Փետրուար 1995ին:

Մրագիրը 21 յարկարաժին կառուցել է: Պատրիարքարանիս բաժինը պիտի ըլլայ 37%, այսինքն ուրը յարկարաժին, բացի Ս. Նիկողայոսի

վաճառքն եւ եկեղեցին, որուն նորոգութեան ծախքերը, մինչեւ \$250,000 (Նրկու Հարիւր Յիսուն Հազար Տոլար ) Կելտու ընկերութիւնը պիտի հոգայ:

Արրահամ Սօխօվումբին Պատրիարքարանին անունով, իսկ իր գործակիցներէն Մօշէ Լիփեան ընկերութեան կողմէ, լիազօրուած են որոշ պայմաններ փոփոխելու:

### ՄԵՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ

-Այս իրողութիւնները արձանագրուած են նաև Տնօրին Ժողովի ատենագրութեանց մէջ, 1991 Դեկտեմբերէն մինչեւ 1995 Փետրուար 16:

Ա.- Մենք մտահոգուիլ սկսանք, երբ մեր ուշադրութեան յանձնուեցաւ երեկան կարեւոր բերքի մը մէջ դրուած նկարը եւ տեղեկութիւնը Երուսաղեմի մեր կալուածի մասին, Անգլիան բարգմանութեամբ, 4 Հոկտեմբեր 1995ին:

Հատ Երուսաղեմի ՏԻ-ԱՅ-ԷՍ ընկերութեան ծանուցումին, “Տուսու Սատան գներ է Հայ Եկեղեցին այս կալուածը Ելումահոն Համալքա եւ Ստէտիա փողոցներուն անկիւմը գտնուաղ, 1.3 տօնում տարածութեամբ: Եւ Աերկայ շէնքը որ 30-ական բուլականներուն շինուած է, պիտի քանդուի:... Արժեքը պիտի կրկնապատկուի, բաղդատմամբ այսօրուան վարձերուն, քաղաքի կեդրոնական մասին մէջ, ուր Աերկային մէկ մերքը խան տոյլար կ'արժէ:» Սատան արդէն վարձու առած է Պատրիարքարանի քանի մը շէնքեր Ելումահոն պողոտային վրայ:

Բ. Նոյնպէս Երուսաղեմի ուրիշ կալուածի մը կապակցութեամբ, մեզի համաճայնագիր մը կը Աերկայացուի մեր փաստարաններուն կողմէ, 99 տարիներու պայմանաժամով, եւ 75%ի դէմ 25% բաժին հանելով Պատրիարքարանին, եւ համաճայնագրի ստորագրութեան ատեն \$50,000 (Յիսուն Հազար) տոլար Պատրիարքարանին կանխիկ յանձնելու պայմանով: Եւ այս համաճայնութիւնը նոյն անձին հետ, որուն հետ արդէն Երուսաղեմի մէկ կալուածին կապակցութեամբ 99 տարուան պայմանագիր ստորագրուած է:

Գ. Նոյն այս անձին հետ ուրիշ պայմանագիր մը Աերկայացուեցաւ մեզի, զայն ընդունելու իրրեւ վարձակալ: Իրեն պիտի յանձնուէին 3000 Քառակուսի մէրք տարածութեամբ չորս յարկերը պարապ մնացած շէնքի մը, քառակուսի մէրքի վրայ ամսական տասը տոլար վարձի հաշիւով: Երբ նոյն անձին յայտարարութեամբ, Քառակուսի մէրքը 20 Տոլար կ'արժէ:

Դ. Մտահոգուելու պատճառ ումեցանք, երբ Յուսիկ Սրբազն մեզի Աերկայացուց մեր փաստարաններուն պատրաստած նոր մէկ համաճայնագիրը, Եաֆայէն մեր ուրիշ մէկ կալուածի մասին, 11 Եֆեկ փողոցի վրայ, 99 տարուան պայմանագրով 65%ի դէմ 35% բաժին հանելով Պատրիարքարանին, իսկ ստորագրութեան պարագային պիտի տրուէր \$750,000 տոլար - կանխիկ գումար: Բայց ժամանակ մը վերջ, անձ մը Աերկայացաւ մեզի որ յայտնեց թէ նոյն համաճայնագրին առիթով ինք փաստարաններուն Յուսիկ Սրբազնին Աերկայութեան առաջարկած է մէկ միլիոն եւ Երկու հարիւր հազար տոլար Պատրիարքարանին տրուելու, եւ մերժուած է:

Ե. Խմացանք որ Շահէ Աթէմեան Եպիսկոպոսը, Աերկայիս իսկ, կը փորձէ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի կողմէ 1973 Սեպտեմբեր 30ին իրեն տրուած լիազօրագիրը շախագործել եւ կեղծել, Պատրիարքի անունով արձանագրուած կարգ մը հողեր ծախելու համար: Ուստի Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի կողմէ տրուած լիազօրագրերը, եւ մեր կողմէ փաստարաններու եւ կալուածոց տեսուչ Յուսիկ Սրբազնին տրուած բոլոր լիազօրագրերը յետս կոչելու եւ չեղեալ Ակատելու նամակներ գրեցինք առ որ անկ է: Եւ մեր փաստարաններէն պահանջեցինք որ իրենց մօտ գտնուող կալուածական փաստարութերը Պատրիարքարան փոխանցեն: Բնական է, միայն խոստացան:

Շահէ Արք.ը ապացոյցը տուաւ իր զեղծումին, դատ քանալով Պատրիարքարանի դէմ եւ պահանջելով երկու կտոր հողեր, Պէյր Սաֆաֆա շրջանակին մէջ, որոնք իրեւ թէ իր եղոր կնոջ անունով գնած է, եւ Պատրիարքարանը անոր պէտք է վերադարձնէ:

Զ.՝ Վերոյիշեալ մտահոգութիւններով, կալուածոց Տեսուչ Յուսիկ Սրբազնէն խնդրեցինք որ 99 տարուան վարձու տրուած երեք կալուածներու համաձայնագիրերը մեզի բերէ: Պատասխանեց թէ «Մեր բովը չունինք քնաւ»:

Փաստարաններէն պահանջեցինք եւ մէկական օրինակ ունեցանք:

\*

\*\*

Այս պատճառներով մասնագէտներու կարծիքը ընդունեցինք, որոնք յայտնեցին թէ համաձայնագիրերը ոչ թէ մէկ 99 տարուան, այլ երկրադ 99 տարուան եւս իրաւունք կուտան վարձակալին:

Եւ Պատրիարքարանին 15% կամ 30% տրուած բաժինը անբաւարար եւ ցած կարգադրութիւն է, եւ հեռու է վանքին համար շահարեր եւ Յպատաւատը նկատուելէ:

Վարձակալը իրեն տրուած 85% կամ 70% բաժինն լիազօր կալուածատէրը կը նկատուի, կալուածը գրաւի դնելու իրաւունքով:

Եւ 99 տարիներու պայմանը կը սկսի, առաջին երեք-չորս տարիներու ընթացքին ծրագիրներու ներկայացումէն, պետական արտօնագիրերը ստանալին եւ շինարարութիւնը ամրողովին աւարտելին յետոյ միայն:

Այս բոլոր իրազութիւնները եւ աւելին, Տնօրէն Ժողովին յայտնեցինք, 1996 Օգոստոս 8 մեր նիստին մէջ, եւ որոշեցինք որ Պատրիարք Սրբազն օրինական միջոցներով պիտի հետապնդէ այս հարցը:

Այս Յպատակով, Առնուլու Նրէր փաստարանին յանձնած ենք հետապնդումը հարցին, ապահովելու համար պայմաններու փոփոխութիւնը եւ վերանկատումը:

Ա.՝ Ռամլէի համաձայնագրի պարագային մանրազննին ստուգումներ կատարուեցան եւ յայտնուեցան նրբայերէն բնագրի եւ Անգլերէն բարգմանութեան զեղծումներ եւ պայմանաժամներու խախտումներ:

Քոնքրաքը յանձն առաւ համածայնի նոր պայմաններ ընդունելու, սակայն կը փորձէ խոչընդոտներ յարուցանել, ինք կառուցելու դժուարութեանց առջեւ գտնուելով: Մեր փաստաբնը պիտի հետապնդէ պայմաններու փոփոխումը, 99 տարուան երկրորդ երկարածզումը մերժելով, եւ Պատրիարքաբնի 15 տո հարիւր բաժինը բարձրացնելով:

Մեր մասնաւոր գնահատամբը կը յայտնենք Հոգ. Տ. Բարգէն Ռ. Վրդ. Անուշեանին, որ որպէս փաստաբն, մեծապէս օգտակար եղաւ համածայնագրերու մէջ պահանջուած պայմաններու խախուսմները ի յայտ բերելով, մատնանշելով եւ հարցապնդելով:

Բ.- Ետքայի Վաճիքի Նրջակայի համածայնագիրը նոյնպէս հետապնդուած է, եւ աւելի նպաստաւոր փոփոխութեանց պայմաններով:

24 Հոկտեմբեր 1997ին, բանակցութիւնները եզրակացութեան յանդեցան հետեւալ արդիւնքով:

1.- Համածայնագիրը ի գորու պիտի նկատուի 99 տարիներու համար միայն: Զեղչուած է ինքնարերարար երկարածզելու պայմանը:

2.- Որպէս զի վարձակալները նանշնան Պատրիարքաբնի սեպհականաւուիրեան իրաւունքը 99 տարիներու ընթացքին, բոլոր վարձակալները պարտին: -

Ա) Պատրիարքաբնին ներկայացնել ամրող վաւերական օրինակները կալուածին հետ կապուած իւրաքանչիւր գործառնութեան կամ փոխանակութեան:

Բ) Ամէն իննը (9) տարին, պարտին Պատրիարքաբնին վճարել, ի նշան սեպհականաւուիրեան նանաշման, կէս-ունկի սուկի (half ounce of gold), օրուան սակի համածայն:

3.- Պատրիարքաբնը կալուածին առաջին յարկին վրայ ստացաւ երեք խանութեան փոխանակ երկութիւ:

Գ.- Երուսաղէմի 9 Ծլօմձիօն Համալքա շէնքի 99 Տարուան համածայնագրի հարցը եւս կը հետապնդուի:

Կալուածական այս բոլոր հարցերուն մէջ ոչ մենք, ոչ Տնօրէն ժողովի անդամները, եւ ոչ ալ մեր հօգեւորականներէն ունէ մէկը մասնագէտ է: Այդ պատճառու կը վստահէինք մեր խորիդատու փաստաբններուն եւ կալուածոց տեսուչի յանձնարարութեանց:

Այս պարագային, կը վստահէինք մանաւանդ այն պատճառով որ, ծրագիրներ ունէինք Հայ տարեցներու համար ծերանց, Հայ ուխտաւորներու համար հիւրանց, եւ ընտանիք կազմել փափառ հայ երիտասարդներու համար բնակարաններ կառուցանել: Եւ մեր տարեկան եկամուտներով կարելի պիտի չըլլար մեծածախս այդ շինարարական ծրագիրները իրագործել:

Այս կացութեան մէջ, անհրաժեշտ էր մտածել Կալուածոց Մատակարարման Մարմին մը կազմելու մասին:

**ԿԱԼՈՒԱԾՈՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՈՒՂԵՑՈՑՑ ԿԱՆՈՆՆԵՐ**

Տնօրէն ժողովի 8 Օգոստոս 1996 Յիստին մէջ որոշելէն յետոյ որ Պատրիարք Սրբազն օրինական միջոցներով պիտի հետապնդէ կրկնակ 99 տարիներու համար Վարձու արուած երեք կալուածներու համաճայնագիրերու հարցը, մենք նիւ Եօրք գտնուեցանք 1996 Հոկտեմբերին Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան քեմի դպրաց դասերու 50 ամեակի առիբով: Եւ Խորերդակցութեան հրաւիրեցինք 1990 թին Պատրիարքաթիս Կալուածոց Խորերդատու Յանձնախումրի անդամները, առաւել տասը յարգելի ազգայինները, Հ.Բ.Ը.Միութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու Յանձնախումրի անդամներ:

Ժողովին ներկայացուցինք լրջութիւնը կացութեան եւ բոլոր մանրամասնութիւնները զորս Տնօրէն ժողովին ներկայացուցած էինք:

Ներկաներէն ոմանց արտայայտած ծայրայեղ տեսակէտն այն էր, թէ Միարանութիւնը կարող չէ կալուածային գործառնութիւններով զրադիլ, հետեւարքը ամրող կալուածները պէտք է յանձննուին աշխարհական մասնագէտներուն:

Աւելի ողջմիտ ազգայիններու հաշալերանքով կարելի եղաւ համամտութիւնը ստանալ երեք երիտասարդ մասնագէտներու որոնք, պատրաստակամ էին կալուածոց գրասենեակի ընդհանուր կազմակերպումը եւ գործառնութիւնները կարգաւորել:

— Հայկական թերթերու մէջ ամնիշտ տեղեկութիւններ երատարակուեցան, Պատրիարքին վերագրելով հողեր ծախելու մեղադրանքը:

Տնօրէն ժողովին 1997 Փետրուար 16 Յիստին մէջ, ներկայացուցինք մեր կալուածներուն սպառնացող վտանգները, եւ ընդհանուր պատկերը:

Այսպէս՝ Նաֆայի եւ Ռամէի կալուածներուն հոգատարութիւնը յանձնուած է Սօխովուսքի փաստաբանական ընկերութեան, եւ Վարձեր գանձող նշանակուած է Պր. Սերյոժա Նորիկեան:

- Նոր Երուսաղեմի կալուածներուն պատասխանատու փաստաբանն է Սօհաննամ Ալյովառուր, որ Արքահամ Սօխօվօլսչիի յանկարծական մահելն յեռոյ, 1995 նոյեմբերեն ի վեր բաժնուած է ընկերակցութենէն: Նո կապի մէջ է Երուսաղեմի գրասենեակին պատասխանատու տեսուչ Յուսիկ Սրբազնին եւ վարձէր գանձող Քարտուղարունի Սօնիա Թումայեանի հետ:

- Հիմ Երուսաղեմի եւ Բերդեեւմի կալուածներուն հարցերով կը գրադի փաստարան Մազգէն Քուփիի, դիւտեատան մէջ կալուածոց գրասենեակին Քարտուղար Կարօ Կոստիկեանին եետ:

Կայ տակաւին Եագով Ռուրին փաստարանը որ հանգուցեալ Եղիշէ Պատրիարքի օրով վարձուած է Սահէ Անհմեան Սրբազնի Վաթին դէմ բացած դատերով գրադիլու:

Նո Առնուլ Երէր փաստարանը որ կը գրադի 99 տարի վարձու տրուած երեք կալուածներուն համաձայնագրերու հարցերով:

Մտահոգիչ է կացութիւնը պարապ հողերու, Բերդեեւմի, Սաֆայի, Ռամէլի, որոնք կը նաև մինչև իսկ գրաւման ենթակայ դառնալ:

Խրախանչիւր փաստարան ձեռքին մէջ ցանկ մը ունի դատական հարցերու եւ վարձակալմերու եետ նոր համաձայնագրեր կնքելու:

Այս բոլորին վրայ չկայ մասնագէտի մը վերին եսկզութիւնը: Իսկ կարիքը մեծ է «Վստահելի խորհրդատուներու»:

Պարապ մնացած շէնքեր կան պետական տուրքի սպառնալիքի ներքեւ: Փաստարուղբերու, համաձայնագրերու մէկտեղման, ինչպէս նաև հաշշիւթերու եւ գանձումներու ստուգման աներածեցութիւնը կայ:

--- Փաստարաններուն խաղերը եւ անհաւատարմութիւնը հետզեւտ բացայսյու կը դառնան:

Եղիշէ Պատրիարքի օրով 99 տարուան վարձու տրուած կալուածներէն գոնէ 15 հատին ցանկը ունիթք: Համաձայնագիրերը, Սօխօվօլսկիի Միջոցաւ պատրաստուած կը պահանջենք: «Պատրիարքարան յանձնած ենք», կը պատասխաննեն: Նո կամ Սահէ Անհմեանը տարեր է: Քայց վստահ ենք որ օրինակներ պէտք է գտնուին Սօխօվօլսչիի գրասենեակներուն մէջ:

--- Յոպպէի 11 Եֆֆէր փողոցին վրայ, երեք յարկանի ընդարձակ շէնք մը ունիթք «մոտ 4000 քառակուսի մերք»: Պաշտպանութեան Նախարարութիւնը վարձակալն էր, 1948էն է վեր: 1995ին, Սօխօվօլսկի փաստարանին եւ կալուածոց Տեսուչին համոզումով, վանքը \$200,000 (Երկու Հարիւր Հազար Տոլար) վճարեց, նախարարութեան տրուելու անունով, որպէս զի շէնքը վանքին յանձնեն: Սակայն շէնքը Քայքայուած վիճակի մէջ բռնած եւ հեռացած են: Փաստարաններէն պահանջեցինք համաձայնագիրը ունենալ, ստուգելու համար թէ ի՞նչ վիճակի մէջ պարտաւոր էին վանքին յանձնել: «Համաձայնագիր չունիթք» կը պատասխաննեն:

Կալուածին Քարտէսը կ'ուզենք: «Չունիթք» կ'ըսեն:

Պատրիարքարանիս հաշուապահութեան գրած Երկու Հարիւր հազար (\$200,000) տոլարի փոխգիրին դիմաց, որ Սօխօվօլսչի փաստարանին

անունին գրուած է, եւ Յուսիկ Սրբազն յանձնած է փաստաբանին որպէս զի Պաշտպանութեան նախարարութեան վճարուի, ընկալագիր չէ բերուած եաշուապահութեան: Նր Պաշտպանութեան նախարարութեանէն, ընկալագիր մը կ'ապահովուի, այն ատեն կը ստուգուի որ Սօխօվօլսքիի անունին գրուած փոխգիրին \$176,000 տոլարը միայն յանձնուած է նախարարութեան:

Եւ երկու տարի է, շենքը Քայլայուած կը մնայ, պետական տուրքի սպառմալիքին ներքեւ:

-- Նոյն կացութիւնը կրկնուած է 1995 Յունիսէն ի վեր, Նրուադեմի 18 Ըլօմծինն Համալիքա փողոցի շենքին պարագային, ուր առաջին երեք յարկերը 99 տարուան վարձու տրուած են Խզրայէլ Պրատըրզ ընկերութեան, իսկ մեր 4-7 յարկերու վարձակալ Պէզէք ընկերութիւնը եեռացած է շենքը անխնամ լինով: Համաձայնագիրը, յանձնումի պայմանները, եւ հասուցումի իրաւումները չեն հետապնդուած, փաստաբանին եւ Տեսուչին կողմէ:

Նոյնպէս շենքին յարկերուն Քարտէսները, ելեքտրականութեան, ջուրի խողովակներու, ջեռուցման եւ այլ գծագրութիւններ կը պահանջուին, ուր յանձնորդներ գոհացնելու համար, բայց չկան: Կը խոստացուին եւ չեն գտնուիր:

Անակնկալօրէն, 1997ին, Խզրայէլ Պրատըրզ ընկերութեանէն կը ստանանք 346,000 (Նրեք Հարիւր Քառասուն վեց հազար ) Ծէքէլի պարտամուրեակ մը, 1995 Յունիսէն մինչեւ 1996 Դեկտեմբեր շրջանին պարագ մնացած շենքին եղանակութեան իրեւ յետնեալ պարտք: Մեր Ըլեւմտից Դիւանէն փաստաբան Ալբանուրը կը հարցապնդեն, որ կը պատասխանէ թէ ինք ամէն ինչ ժամանակին գրասնեակ յանձնած է Տեսուչ Յուսիկ Սրբազնին:

Սօխօվօլսքի փաստաբանական ընկերութիւնը մեր կալուածներուն 7-8 Միլիոն Ծէքէլ եկամուտին 5% իրեւ տարեկան վարձք կը ստանայ: Նաեւ գանձած է 5%ը 99 տարուան վարձու տրուած նումլէի եղին եւ Յոպպէի վանքին համաձայնագրերէն Պատրիարքաթիւն կամխիկ դրամ տրուած մէկ միլիոն տոլարին: Նաեւ գանձած է իրաքանչիւր դատին առիրով իր Յերկայացուցած դատական ծախսները:

-- Վերոյիշեալ մտահոգութիւնները ներկայացնելով, հետեւալ առաջարկութիւնը ըրինք Տեօրէն ժողովին -«Նկատի առնելով որ, Պատրիարքաթիւն Վանքապատկան կալուածոց մտակարարման եւ տնտեսութեան հարցով Պատրիարքը կ'ամրաստանուի իրեւ պատասխանատու, Պատրիարք Սրբազն կ'առաջարկէ պատասխանատու մարմին մը նշանակել, կալուածական հարցերու հմուտ անձերէն, որոնց պարտականութիւնը պիտի ըլլայ: -

1. Կարգաւորել, եսկել, բնենք եւ նշորոշել Պատրիարքաթիւնի կալուածական եւ տնտեսական դրութիւնը եւ պաշտօնեաներու եւ փաստաբաներու պարտաւորութիւնները եւ գործառնութիւնները:

2. Համակարգել Կալուածական փաստաբանութեար եւ բորածրաբները:

3. Կանոնաւորաբար տեղեկագրել Պատրիարք Սրբազնին եւ Տեօրէն ժողովին, եւ հրապարակագրութեամբ կստահութիւն ներշնչել ազգային հաստատութեանց եւ հայ հասարակութեան, Պատրիարքաթիւնիս

վաճառապատկան կալուածներուն եւ տնտեսութեան կանոնաւոր եւ ապահով մատակարարման մասին»:

4.- Պատրիարք Սրբազն կ'առաջարկէ նշանակել Խնտոնէն Տիար Վաչէ Մամուկեան, Հարրիսպուրկ Փէնսիլվանիայէն Տիար Ճաճ Վարդան, Նիւ Ճըրգիէն Տիար Դաւիթ Նամարեան, եւ Թօրօմք Գանատայէն Տիար Սնպուն Պօյամեան, եւ այլ անձներ ըստ իրենց դատողութեան:

5.- Պատրիարք Սրբազն խնդրած է վերոյիշեալ ազգայիններէն որ կարելի փուրով իրենց ներկայացուցիչը դրկեն Երուսաղէմ, ստուգում կատարելու եւ տեղեկագրելու, որոշելու համար իրենց յանձնառութեան պայմանները:

... Տնօրէն ժողովի համաձայնութեան վրայ, յանձնախումբի կողմէ Երուսաղէմ դրկուեցաւ Հարրիսպուրկէն, կալուածական հարցերու մասնագէտ փաստարան Մայքլ Տէյլի, որ Երուսաղէմ մնաց Փետրուար 24էն մինչեւ Մարտ 25, ծանօթացաւ ներկայ կացութեան, տեսակցեցաւ բոլոր փաստարաններուն, հաշուապահութեան, կալուածոց տեսչութեան պաշտօնեաններուն, Տնօրէն ժողովի անդամներուն հետ, եւ իր տեղեկագիրը պատրաստեց:

Մայքլ Տէյլի իր թելադրութիւնները եւ յանձնախումբին պատասխանառուութիւնները նշող ուղեցոյց-կանոնները եւս ներկայացուց Տնօրէն ժողովի երեք նիստերուն, Մարտ 12ին, 14ին եւ 24ին: Ուղեցոյց-Կանոնները փոփոխութեանց ներարկուեցան եւ սրբագրուեցան, Տնօրէն ժողովի թելադրութեանց համաձայն:

Սակայն Տնօրէն ժողովի 1997 Մարտ 24 նիստին մէջ կանոնները եւ յանձնախումբին կամաւորապէս երկու տարի ծառայելու առաջարկութիւնը չընթառնեացան եւ չը հաստատուեցան:

... Ասոր փոխարէն՝ իրեր Կալուածոց Մարմին առաջարկուեցան Գիսակ Արք. Մուրատեան, Սեւան Նպս. Ղարիպեան եւ Բագրատ Արդ. Պուրծէքեան:

Սակայն անմիջականորէն կալուածական ստիպողական հարցերով զրադալու համար, առժամեայ յանձնախումբ նշանակուեցան Դաւիթ Արք. Սահակեան, Յուսիկ Նպս. Պաղտասեան, եւ Բարսեղ Վրդ. Գալէմտարեան:

... Գիսակ Արք. Մուրատեան մեզի հաղորդեց թէ ինք պիտի չը կարենայ ներկայիս այդ պարտականութիւնը ստանձնել:

Առժամեայ Յանձնախումբի երեք անդամները Մայիս ամսուն մէջ յայտնեցին թէ կալուածական հարցերը բազմարիւ են եւ իրենք պիտի չը կարենան պահանջուած ժամանակը տրամադրել, ուստի կը երաժարին:

... Գերաշնորհ Դաւիթ եւ Յուսիկ Սրբազններուն հետ կրկին նկատի առինք բարեփախօսալ եւ սրբագրեալ ուղեցոյց կանոնները: Եւ Յուսիկ Սրբազնին թելադրած յաւելեալ երկու յօդուածներն ալ բանձնեւելով (6.11 եւ 6.12), Տնօրէն ժողովի 1997 Մայիս 20 ի նիստին ներկայացուեցան: Եւ ուղեցոյց-կանոնները եւ նշանակուած յանձնախումբ անդամներուն պաշտօնը վաւերացուեցան, մեծամասնութեան բոււարկութեամբ եւ ստորագրուեցան:

... 1997 Յունիս 16ին Նիւ Նօրք մեր այցելութեան առիրով, առաջին հանդիպումը ունեցանք նշանակուած երեք վարիչ անդամներուն

հետ (Ճան Վարդան՝ Ատենապետ, Դաւիթ Նանարեան՝ Գանձապահ, Սեպուհ Պոյանեան՝ Ատենադպիր):

Այս հանդիպումին նկատի առինք կալուածոց մատակարարման եւ գրասենեակի կազմակերպման բազմաթիւ հարցեր: Անմիջական կարգադրութեան համար նկատի առնուեցաւ Մայքլ Տէյլի փաստարանական փորձառութիւնը եւ մեր կացութեան եւ հարցերու մասին իր ծանօթութիւնը, ուստի որոշուեցաւ զինք պատասխանատու վարիչ Յշանակել, գրասենեակի կազմակերպման շրջանի մը համար:

Տեօրէն ժողովի 1997 Յունիս 26 նիստին մէջ, կալուածոց Մատակարարման Մարմնի վաւրացուած կանոններուն 3.05 Ա. յօդուածին համաձայն, Յշանակեցինք երկու հոգեւորական խորերդականներ Միարանութեանս անդամներէն: Մէկը՝ Խորայէլ եւ կամ Յորդանան բնակող, Հոգ. Տ. Բագրատ Արդ. Պուրեկինեանը, եւ միւսը՝ Խորայէլէն եւ Յօրդանանէն դուրս բնակող՝ Գեր. Տ. Գիսակ Արք. Մուրատեանը:

Թելադրուեցաւ նաեւ որ Յշանակուած Վարիչ Մարմինի անդամները երր Յուսադէմ այցելեն, ամրող Միարանութեան եւս բացատրութիւն տրուի Կալուածոց Մատակարարման Մարմնի ուղեցոյց կանոններուն, ծրագիրներուն եւ կալուածական ընդհանուր կացութեան մասին:

— Տեօրէն ժողովի Յունիս 26 նիստին, կալուածոց տեսուչ Յուսիկ Սրբազն կը բացակայէր, Միացեալ Նախաթգներ գտնուելով: Յուլիս 1 ըութկիր նամակով Յուսիկ Սրբազնին հայորդեցինք Կալուածոց Մատակարարման Վարիչ Մարմնի խորերդական անդամ Յշանակուած հոգեւորական երկու Միարան Հայրերու մասին, եւ յիշելով որ գրասենեակի փոխանցումը կը յուսանք պիտի կատարուի յառաջիկայ շարարթներուն: Իր վերադարձին, Յուսիկ Սրբազն Քաղաքի գրասենեակէն համակարգիչը եւ փրկմբը տպագրիչ չործիքը դիւանատան գրասենեակ փոխադրելով, փոխանցումը կատարեց Ծգոստոս 18ին:

Կալուածոց Մատակարարման Վարիչ Մարմինի հսկողութեան ներքեւ, կալուածոց գրասենեակի աշխատանքին Յշանակուած են Մայքլ Տէյլի, Տ. Բագրատ Արդ. Պուրեկինեան եւ հաշուապահ Մուսա Քամար, նոյն ժամանակ շամալով գրասենեակի համար պաշտօնեաներ ապահովել:

\*

\*\*

Աեա ուրուագծային պատկերացումը մեր Տումին, եւ Առաքելական այս Սուրբ Արոռոյ Միարանութեան, առաքելութեան եւ գործունեութեան:

Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը, Քրիստոսի Աւետարանի ուսուցումներուն, բարոյական եկմեքերու եւ Քրիստոնէական բարոյական պարտաւորութեանց գիտակցութեան վրայ եկմենուած Եղբայրութիւն մըն է, իրեն յատուկ կարգապահական կարգ ու սարքով: Այս գիտակցութիւնը եթէ մոռցուի կամ պակսի, ամկումները եւ վլուզումները անխուսափելի կը դառնան:

Այն ատեն ազգին Վիրաւոր Խնդմտանին առջեւ պիտի չը կարենանք գուարքերես աղօթել:

Բազմաթիւ մեր առաքելութեան ամէն մէկ մարզին մէջ կարիքը ունինք կազմակերպուած գործունեութեան, որպէս զի կարենանք եղանական բաւարարութեան եւ ապահովութեան երաշխիքը տալ, թէ մեր Միարանութեան իրաքանչիւր անդամին, եւ թէ մեր ազգին զաւակներուն, որոնք անխարդախ հաւատով եւ սէրով կը ենեւելին դարաւոր այս հաստատութեան ներկայութեան եւ պայծառութեան, համայն Քրիստոնեայ աշխարհին, ինչպէս միւս կրօնքներուն համար, նուիրական այս եռողերուն վրայ:

Ամէն հայորդիի փափաքն ու յօյսն է, որ Երուսաղեմ ուխտի պիտի գայ, հայ հաւատէի լոյս-աղբիւրին իր շրբները մօտեցնելու, եւ երիցս օրինեալ՝ տուն վերադառնալու: Որքան աւելի մենք՝ որ այս Տումին ծնունդն ենք եւ այս Հաստատութեան եղանակութեան սպասաւորները, պէտք է մշտապէս մտածենք մեր Տումին բարեկարգութեան մասին, բարոզութեամբ, ծրագրելով եւ գործեով:

Թնական է որ ոչ մէկ անձ եւ ոչ մէկ մարդկային արարք կարելի է ակնկալի որ ինքզինք իրագործէ կատարելապէս, առանց թերիներու:

Բայց գոհունակութեան եւ ուրախութեան զգացումով կը լեցուին դիտողները, արդիւնքին վայելիքը ապրողները, տեսնելով որ ամէն ոք ծառայութեան եղանակ, եւ իր կարողութեան չափով, նուիրուած է իր կոչումին:

Ինչ գոհունակութեամբ կը լեցուի մեր սիրտը երբ օտարներ կամ հայ ուխտարներ երախտագիտութեամբ կը յիշեն շնորհալի վերաբերմունքը իրենց ընկերակցող կամ զիրենք ընդունող եայ եկեղեցականին:

Գործունեութեանց դաշտը ընդարձակ է եւ կարիքները բազմաթիւ: Թէպէտեւ մեր ժողովուրդին դիմում չենք կատարած հանգանակութեան ծրագիրով, մասնաւորաբար նկատի առած Մայր Հայրենիքի ներկայ տնտեսական ծանր կացութիւնը, այնուևանդերձ շնորհակալութեամբ եւ օրինութեամբ կը յիշենք մեր ժողովուրդին նուիրատու զաւակները եւ հաստատութիւնները իրենց սրտարուխ օժանդակութեանց համար:

Ասոնց կարգին են, Երուսաղեմի Պատրիարքութեան բարեկամներու Յանձնախումբը, նիւ Նօրք. Միացեալ Նահանգաց Արեւելեան եւ Արեւմտեան թեմերու Հիմնադրամներու յանձնախումբերը. Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, Լիզառն. Սուրբ Սարգսի նկեղեցւոյ Կիւլպէնկեան Թրըսքը, Լուստոն. Սրբոց Թարգմանչաց Սանուց Միութիւնը, Լոս Աննելոս. Պատրիարքաբանի Օժանդակ կազմակերպութիւնը, Լոս Աննելոս. Կիւլլապի Կիւլպէնկեան եւ Գարակէօզեան Յանձնախումբերը, Նիւ Նօրք. եւ բազմաթիւ հաւատաւոր զաւակներ մեր Սուրբ նկեղեցւոյ:

Տիրոջ աջը քող միշա եռվանի լինի իր փառքը օրիներգող Առաքելական մեր այս Տումին վրայ, եւ սերունդէ սերունդ Սուրբ Հոգուոյ շնորհներով զարդարուած անոր զինուորեալ Միարանութիւնը քող հաւատարմօրէն ապրի ու գործէ, Աստուծոյ փառքին, մեր Սուրբ նկեղեցւոյն հաստատութեան, եւ մեր սիրեցեալ ժողովուրդին եղանակութեան անումին սիրոյն: Ամէն:

Թ.Ա.Մ.